

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

- Ընթացիկ հաշվետվություն
- Եռամսյակային ֆինանսական հաշվետվություն
- Տարեկան հաշվետվություն

**« ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ » բաց բաժնետիրական ընկերություն,
«ԵՈԳ» ԲԲԸ**

թողարկողի ֆիրմային անվանումը (անունը, ազգանունը)
Բաց բաժնետիրական ընկերություն

կազմակերպական - իրավական ձևը
ք.Երևան 0023, Արշակունյաց, 12 հեռ. 58-66-18, ֆաքս 52-57-13

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլ-փոստ և այլն)
N 8 04.07. 2012թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

տեղաբաշխված արժեթղթերի դասը`	սովորական
արժեթղթերի քանակը`	10.348.896 հատ
արժեթղթերի անվանական արժեքը(արժույթը)`	1000

«Մենք` ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել հաշվետվության ամբողջականությունը»:

ստորագրող անձինք` Ազատուհի Մակարյան	գլխ. հաշվապահ		04.07. 2012թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են (ստորագրությունները վավերացվում են տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից)`

Գագիկ Կաֆյան	գլխավոր տնօրեն		04.07. 2012թ...
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

« Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ո Ս Կ Ե Ր Չ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն » Բ Բ Ը

Ընթացիկ հաշվետվություն

2012թ. տարեկան ժողով

Հասցե	ք. Երևան 023, Արշակունյաց փ. 12
Հեռախոս	52-53-21,58-66-18
Ֆաքս	52-57-13
Էլփոստ	Info@yerjewel.com
Ինտերնետ կայք	www.yerjewel.com

Սույն թվականի հունիսի 29 -ին տեղի ունեցավ «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ներկայացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման ժամանակ առաջացած հետևյալ փաստաթղթերը՝

1. Ընկերության տնօրենների խորհրդի 20.05.2012թ. կայացած նիստի արձանագրությունը (N 2Խ-12):

2. Տարեկան ընդհանուր ժողովի արձանագրությունը (N 1Ժ -12, 29.06.12թ.):

3. Հաշվիչ հանձնաժողովի N 1, N 2 և N 3 արձանագրությունները:

4.Գլխավոր տնօրենի Ընկերության 2011թ. գործնության վերաբերյալ զեկույց:

5. 2011թ.-ի գործնության ֆինանսական վերլուծությունը:

6. Վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունը:

7. Բաժնետերերին բաժանված հետևյալ նյութերը՝

- ժողովի օրակարգը;
- Ընկերության 2011թ. տարեկան հաշվետվություն;
- Տնօրենների խորհրդի անդամության առաջարկվող թեկնածուների ցուցակը;
- Քվեաթերթիկի օրինակը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2 Խ-12

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ տնօրենների խորհրդի նիստի

ք. Երևան
Ներկա են`

20.05. 2012թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ տնօրենների

խորհրդի Նախագահ` Արա Պետրոսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ,

խորհրդի անդամները`

Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնոմոն »ԲԲԸ Գլխավոր տնօրեն,

Գագիկ Աղաջանյան - «ԱՔՌԱ ԿՐԵԴԻՏ ՌԵՓՈՐՏԻՆԳ» ՓԲԸ փոխտնօրեն
Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան,
Էդուարդ Մաթևոսյան - « ԵՈԳ » ԲԲԸ իրավաբան

Հրավիրված` Գագիկ Կաֆյան - « ԵՈԳ » ԲԲԸ Գլխավոր տնօրեն:

Ձեկույցով հանդես եկավ «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ Գլխավոր տնօրեն Գ. Կաֆյանը, որը տեղակացրեց, որ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջները ապահովելու նպատակով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է կայանա մինչև 2012թվականի հունիսի 30-ը:

Այս կապակցությամբ որոշեցին`

1. Ընկերության 2011թվականի գործունեության տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2012թվականի հունիսի 29-ին, ժամը 16.00, ք.Երևան , Արշակունյանց 12 հասցեում:

2. Հաստատել «ԵՈԳ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հետևյալ օրակարգը՝

- 1) Ընկերության 2011 թվականի գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
- 2) Ընկերության 2011 թվականի ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
- 3) Ընկերության 2011 թվականի շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
- 4) Ընկերության վերահսկողի հաշվետվության հաստատում:
- 5) Տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

**Խորհրդի Նախագահ՝
Անդամներ՝**

**Արա Պետրոսյան
Էմիլ Գրիգորյան
Գագիկ Աղաջանյան
Սեյրան Սուվարյան
Էդուարդ Մաթևոսյան**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1Ժ -12

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական
Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի,
կայացած 2012թ. հունիսի 29 -ին, ժամը 16.00

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ ընտրվեց տնօրենների խորհրդի
նախագահ Արա Պետրոսյանը, քարտուղար ընտրվեց Օ. Ամիրյանը (միաձայն):

Միաձայն ընտրվեց նաև հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց՝
ժամհարյան Արմինե, Ղազարյան Գայանե, Արշալույս Ներսիսյան:

Հաշվիչ հանձնաժողովը ներկայացրեց, որ Ընկերության տեղաբաշխված
10 348 896 բաժնետոմսերի սեփականատերերից ժողովին ներկա են թվով
8.315.408 բաժնետոմսերի սեփականատերեր, կամ նրանց լիազոր
ներկայացուցիչները (80,35%) :

Ժողովին ներկայացվեց հետևյալ օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ընկերության 2011թվականի գործունեության տարեկան հաշվետվության
հաստատում:

2. Ընկերության 2011 թվականի ֆինանսական գործունեությունը ամփոփոխ
տարեկան հաշվետվության հաստատում:

3. Ընկերության 2011թվականի շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:

4. Ընկերության վերստուգողի 2011թ. հաշվետվության հաստատում:

5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

Բաց քվեարկությամբ ժողովի օրակարգը հաստատվեց միաձայն:
Ընկերության 2011թ. գործունեության տարեկան հաշվետվությունը բաժնետերերի
ուշադրությանը ներկայացրեց Ընկերության գլխավոր տնօրեն Գ. ԿԱՖՅԱՆԸ:

Իր ելույթում նա ներկայացրեց 2011թ. Ընկերության գործունեության համառոտ նկարագիրը՝ նշելով այն տենդենցները, որոնք իրենց ազդեցությունն ունեցան Ընկերության գործունեության արդյունքների վրա: Որպես Ընկերության զարգացումն ապահովող ուղղություններ նշվեցին հետևյալները.

- 2012 - 2013թթ. հասնել տեսականու աճի՝ մինչև 65 տեսակ իրի, ըստ շուկաների,
- 15 նոր մեդալների կոնստրուկտորա-տեխնոլոգիական մշակում և ներդրում,
- 5 տեսակի ժամացույցների մոդելների մշակում և ներդրում,
- Էլեկտրոնոգիոն հարգադրոշմների արտադրության իրականացում,
- արտադրության դիվերսիֆիկացիա, մասնավորապես ոչ թանկարժեք մետաղներից արքեսուարների արտադրություն:

Ձեկուցողը սպառիչ պատասխաններ տվեց բաժնետերերի կողմից բարձրացված բոլոր հարցերին:

Հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են՝

կողմ՝ - 8.315.408 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Օրակարգի երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ զեկուցեց Ընկերության գլխավոր հաշվապահ Ա. Մակարյանը: Նա նշեց, որ Ընկերության հաշվապահական հաշվեկշռի աուդիտը կատարել է «Հայաուդիտ» ՍՊԸ աուդիտորական ընկերությունը: Ա. Մակարյանը ներկայացրեց Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվությունը և Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվությունը:

2011թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ՝ - 8.315.408 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվությունը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ՝ - 8.315.408 դեմ՝ - 0 ձեռնպահ՝ - 0

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց վերստուգող Յ. Հակոբյանը: Նա նշեց, որ հաշվապահական և ֆինանսական հաշվետվությունները գնահատվում են բավարար:

Վերստուգողի հաշվետվության հաստաման հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

կողմ` - 8.315.408 դեմ` - 0 ձեռնպահ` - 0

Օրակարգի 5-րդ հարցի` Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության համար որոշվեց ներկայացնել քվեարկության Ընկերության երկու բաժնետերերի` Էմիլ Գրիգորյանի և Էդուար Մաթևոսյանի թեկնածությունները, իսկ Ընկերության պետական բաժնեմասի (80%) երեք ներկայացուցիչներ` Արա Պետրոսյան - ՀՀ Էկոնոմիկայի Նախարարի տեղակալ, Գագիկ Աղաջանյան - «ԱԿՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ տնօրենի տեղակալ և Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան, դոցենտ :

Տնօրենների խորհրդի անվանական կազմը քննարկումներից հետո դրվեց գումարային քվեարկության և ստացավ հետևյալ քանակությամբ ձայներ:

Արա Պետրոսյան	կողմ` - 8.315.408
Էմիլ Գրիգորյան	կողմ` - 8.315.408
Գագիկ Աղաջանյան	կողմ` - 8.315.408
Սեյրան Սուվարյան	կողմ` - 8.315.408
Էդուարդ Մաթևոսյան -	կողմ` - 8.315.408

Խորհրդի նախագահ Արա Պետրոսյանը, խորհրդի անդամ Էմիլ Գրիգորյանը հրաժարվեցին ամենամսյա պարզևատրման վճարից:

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի տվյալների Արա Պետրոսյանը, Էմիլ Գրիգորյանը, Գագիկ Աղաջանյանը , Սեյրան Սուվարյանը , Էդուարդ Մաթևոսյանը ընտրվեցին տնօրենների խորհրդի կազմում: Գագիկ Աղաջանյանին և Սեյրան

Սուվարյանին սահմանվեց ամենամսյա պարգևավճար 300 000,0 դրամ յուրաքանչյուրին, Էդուարդ Մաթևոսյանին 100 000,0 դրամ:

Ժողովը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ընկերության 2011թ. գործունեության տարեկան հաշվետվությունը հաստատել:

2. Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեությունը ամփոփոխ տարեկան հաշվետվությունը հաստատել:

3. Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատել:

4. Վերստուգող 2011թվականի հաշվետվությունը հաստատել:

5. Տնօրենների խորհուրդի անդամներ ընտրել հետևյալ անձանց՝

Արա Պետրոսյան - ՀՀ Էկոնոմիկայի Նախարարի տեղակալ,
Էմիլ Գրիգորյան - ԵՈԳ -1 « Գնոմոն » ԲԲԸ Գլխավոր Տնօրեն,
Գագիկ Աղաջանյան - «ԱԿՈԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ տնօրենի տեղակալ,
Սեյրան Սուվարյան – Երևանի պետական համալսարան,
Էդուարդ Մաթևոսյան - « ԵՈԳ » ԲԲԸ իրանական հարցերով խարհրդական

Գագիկ Աղաջանյանին և Սեյրան Սուվարյանին սահմանել ամենամսյա պարգևավճար 300 000,0 դրամ յուրաքանչյուրին, Էդուարդ Մաթևոսյանին 100 000,0 դրամ:

Ժողովի օրակարգը սպառվեց, և հայտարարվեց նրա փակումը:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Օ. ԱՄԻՐՅԱՆ

Տարեկան զեկույց

2011թ. ընթացքում Ընկերության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ
Ձեկուցող՝ «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ գլխավոր տնօրեն,
Գագիկ Կաֆյան

Ստորև ներկայացնում ենք «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ–ի 2011թ. **Ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:**

2011 թվականի ընթացքում «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ արտադրանքի, ապրանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 54 675,0 հազ. դրամ, որի դիմաց իրացման ծախսերը կազմել են 8 273,0 հազ. դրամ, նախորդ տարվա 11 454,0 հազ. դրամի դիմաց, իսկ վարչակառավարչական ծախսերը կազմել են 113 845.00 հազ. դրամ, նախորդ տարվա 117 747.00 հազ. դրամի դիմաց:

2011 թվականի ընթացքում ոսկու գների կտրուկ տատանումները և զգալի աճը կրճատել է գնորդների կողմից պատվերները, որի արդյունքում զգալի նվազել է արտադրանքի իրացումից հասույթը նախորդ տարիների համեմատ, գործառնական այլ եկամուտներից հասույթը նույնպես զգալիորեն նվազել է նախորդ տարիների համեմատ :

2011 թվականի ընթացքում ձեռնարկվել են միջոցներ անարդյունավետ ծախսերի կրճատման վերաբերյալ, մասնավորապես կրճատվել է գովազդի ծախսերը: Բնական է, ընկերության գործունեության ոլորտը ենթադրում է, որ գովազդի ծախսերը պետք է լինեն հիմնական ծախսային հոդվածներից մեկը, սակայն ելնելով առկա ֆինանսական իրավիճակից աշխատում ենք գտնել գովազդի ավելի քիչ ծախսատար տարբերակներ, օգտագործել ինտեռնետի հնարավորությունները:

Հունքի արժեքը ոսկերչության և ադամանդագործության մեջ հիմնական ծախսային տարրն է ինքնարժեքի ձևավորման գործընթացում: Անհրաժեշտ է ձևավորել ոսկերչական արտադրությունը թանկարժեք մետաղներով ապահովելու խնդիրը:

Ընկերությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացրել «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ –ն 2011-2013 թվականների ֆինանսատնտեսական գործունեության Գործարար Ծրագիր, որի առանցքային դրույթն ու կատարման նախապայմանն է Ընկերության սեփականաշնորհման գործընթացը:

Ներկայումս էլ գտնու՞մ ենք, որ Ընկերության համար կիրառելի են սեփականաշնորհման երեք հնարավոր տարբերակ՝

ա/. Միաձուլել «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ և Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ, կիրառելով ուղղակի վաճառքի եղանակը նախապես հայտնի գնորդի՝ Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

բ/. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ-ը կոնցեսիա կամ հավատարմագրային կառավարման հանձնել Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

գ/. Արժեթղթերի մի մասը, մինչև 30 % տրամադրել ուղղակի վաճառքի եղանակով նախապես հայտնի գնորդի՝ Երևանի Ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ը:

Մնացած արժեթղթերը հանել ազատ վաճառքի

Ընկերության հիմնական նպատակն է՝

2013 թվականին և հաջորդ տարիների ընթացքում նշված հզորությունների առավելագույն օգտագործմամբ նվազեցնել արտադրական ծախսերը, կրճատել աշխատատարությունը, փոփոխել արտադրական կառուցվածքը, որոնց շնորհիվ իջեցնել արտադրանքի ինքնարժեքը՝ ապահովելով բարձր շահութաբերություն:

Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք

և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, մասնագետների ուսուցման, վերապատրաստման, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 348 896 000 դրամ, որը կազմում է 10 348 896 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 10 348 896 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից, ընդ որում 8 279 117 սովորական անվանական բաժնետոմսեր (80 տոկոսը) համարվում են պետական սեփականություն (տնօրինվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից), իսկ 2 069 779 սովորական անվանական բաժնետոմսեր (20 տոկոսը) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության արտադրության ուղղություններն են՝

- ոսկերչական իրերի պատրաստում և վաճառք;
- ոսկյա ժամացույցների(նաև թանկարժեք քարերով) պատրաստում և վաճառք;
- թանկարժեք և գունավոր մետաղներից մեղալների, հուշանեղալների պատրաստման պատվերների կատարում;
- ոսկերչական արտադրության սարքավորումների, հանդերձանքի, գործիքների պատրաստում և վաճառք;
- ծառայությունների մատուցում ;

Ընկերությունը բյուջեյի, սոցապի նկատմամբ պարտավորությունները կատարում է ժամանակին:

Ընկերության կառավարման մարմինների վերաբերյալ տեղեկություններ

Ընկերության կանոնադրությամբ սահմանված Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Ընկերության կառավարմանը մասնակցող անձինք են՝ Գագիկ

Կաֆյանը (գլխավոր տնօրեն), Ազատուհի Մակարյանը (գլխավոր հաշվապահ):

Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

Ընկերության գործնելիության հիմնական ուղղություններն են՝

1. ոսկերչական իրերի նոր նմուշների մշակում, դրանց մոդելների և նմուշների պատրաստում;
2. ժամացույցների իրանների դիզայնի և համապատասխան կոնստրուկցիաների մշակում;
 - ոսկերչական արտադրության սարքավորումների, գործիքների մշակում և արտադրությունում ներդրում;
 - ոսկերչական իրերի պատրաստմանն անհրաժեշտ հանդերձանքի, հարմարանքների նախագծում և ներդրում;
 - շքանշանների, մեդալների, հուշանդամների արտադրության նախապատրաստում;
 - նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում;
 - մարքեթինգային հետազոտության և պատվերների փաթեթի ապահովում:

Տեղեկություններ Ընկերության նախատեսվող գործնելիության վերաբերյալ

2012-2013 թվականին նախատեսվող աշխատանքներ.

- 65 նոր ոսկերչական իրերի արտադրության համար անհրաժեշտ հանդերձանքի մշակում և պատրաստում,
- 5 նոր ժամացույցների արտադրության համար անհրաժեշտ հանդերձանքի մշակում և պատրաստում,
- էլեկտրոնեռոզիոն հարգադրոշմների արտադրության իրականացումն աշխատանքներն են հանդիսանում՝

- արտադրության դիվեռսիֆիկացիա, մասնավորապես ոչ թանկարժեք մետաղներից աքսեսուարների արտադրություն

Ընկերության արտադրանքի սպառման հիմնական շուկաներն են հանդիսանում

- Ռուսաստանի Դաշնություն
- Ղազախստան
- Մոլդովա
- Գերմանիա
- Թուրքմենիա
- ԱՄՆ

Նշված շուկաներում զբաղեցրած դիրքերը ամրապնդելու և հետագա զարգացման համար անհրաժեշտ է ապահովել շուկայում բարձր պահանջարկ ունեցող տեսականու արտադրությունը: Տվյալ պահին թվարկված բոլոր շուկաներում բարձր պահանջարկ ունեն թեթև քաշ ունեցող ոսկերչական իրերը, ինչպես նաև սպիտակ ոսկյա իրերը թանկարժեք քարերով՝ հատկապես շատ քանակությամբ: Դիրքերը ամրապնդելու գրավական է համարվում պատվերների կատարման ժամանակահատվածի շարունակական նվազեցումը:

Ուսումնասիրելով արտաքին շուկաներում ստեղծված իրավիճակն ու վերլուծելով տարբեր տոնավաճառներում մասնակցության արդյունքները, կարելի է արձանագրել, որ այժմ Ընկերության համար ռազմավարական նշանակություն է ձեռք բերում նախկին ԽՍՀՄ տարածքում դիրքերի ամրապնդումը և վաճառքի ավելացումը: Ի շնորհիվ շուկայում պահպանվող դիրքերի և Ընկերության առևտրային նշանի (բրենդի) հայտնի լինելուն, անհրաժեշտ է մաքսիմալ կերպով օգտագործել իրավիճակը՝ զուգահեռաբար տանելով աշխատանքներ այլ շուկաների հայթայթման և պահպանման գործում: Առանձին կետով հարկ է նշել, որ տվյալ մրցակցային պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում ժամկետների և որակի պահպանումը:

Ընկերության արտադրանքի արտահանման հիմնական միջոցներն են.

- 1/ Ավիաուղիները
- 2/ Սուրհանդակային ծառայությունները
- 3/ Բեռնափոխադրող կազմակերպությունները:

Ընկերության արտադրանքը նախատեսված է միջին և բարձր խավի սպառողների համար: Այս արտադրանքը չունի տարիքային և սեռական սահմանափակում: Չնայած այն հանգամանքին, որ այն չի ներկայացնում կենսական անհրաժեշտություն, այն հանդիսանում է գեղեցկության և շքեղության խորհրդանիշ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար: Ելնելով շարունակաբար բարդացող մրցակցային պայմաններից, անհրաժեշտ է դառնում ընդլայնել սպառողների ծավալը՝ ներգրավելով նաև բնակչության այն մասը, որն ունի կայուն, սակայն միջինից ցածր եկամուտ: Դրա հիմնական միջոց է հանդիսանում թեթև քաշով և հետևաբար հարաբերական ցածր գներով, իրերի արտադրությունը:

Ընկերությունն այսօր հանդիսանում է մեդալների և հուշամեդալների միակ արտադրողը ներքին շուկայում: Տվյալ ոլորտը կարող է նաև շահավետ լինել Ընկերության համար արտաքին շուկայում որակական և գնային ճիշտ քաղաքականության մշակման դեպքում:

Ընկերության գործունեության վրա հնարավոր է բացասական ազդեցություն ունենալ.

- Ընկերության կողմից տեսականու նորացման և թարմացման ուշացումը
- Գների կտրուկ աճի դեպքում
- Համաշխարհային շուկայում ոսկու գների կայունության դեպքում ազգային տարադրամի շարունակական արժևորումը
- Գնային սխալ քաղաքականության իրականացում
- Ժամկետների խախտում
- Գովազդի բացակայություն

.Հարկային օրենսդրության կտրուկ փոփոխություններ

Մարքեթինգային ուսումնասիրությունների բացակայությունը

Ամենակարևորը - դա ավանդական շուկաների պահպանումն է և նոր շուկաների հայթհայթումն է: Սրա հետ կապված կուզենայի նշել, որ արտադրողները առևտրային ցանցին ոսկերչական իրերը որպես կանոն տրամադրում են վճարման տարեկետման իրավունքով, սա առավել ակտուալ է ներկայիս ֆինանսատնտեսական իրավիճակում:

Արտադրողներին էլ որպես կանոն տրամադրվում է կոնսիգնացոն եղանակով և շուկայական գնից ցածր գնով: Այստեղ մեծ է բանկերի դերը, հաշվի առնելով հեյջինգի

(ապահովագրման) մեխանիզմի կիրառումը: Պետք է ձգտենք ներդնել այս մեխանիզմը, ներգրավել մեր բանկերին, իհարկե ՀՀ ԿԲ համակարգող դերակատարությամբ:

Այս աշխատածնի կիրառման համար անհրաժեշտ պայման է տեղական ոսկիարդյունահանող ձեռնարկությունների զարգացումը:

Գագիկ Կաֆյան

Գլխավոր տնօրեն

Ընկերության ֆինանսական վերլուծություն

2011թ.

Նկատի ունենալով 2011թ. «Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ներկայացնում են ընկերության 2011 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ որոշ տվյալներ.

Ընկերության ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 4737215,0 հազ.դրամ, այդ թվում ոչ ընթացիկ ակտիվները 2120727,0 հազ.դրամ, ընթացիկ ակտիվները՝ 2793032,0 հազ.դրամ, որոնք կազմում են ընդհանուր ակտիվների համապատասխանաբար 44.76% և 55.24%-ը:

2011թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի վնասը կազմել է 215 085.00 հազ.դրամ:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C- Ձեռնարկություն հաշվապահական ծրագրով:

Ա. Մակարյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի

2011թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական
հաշվետվությունների հավաստիության մասին

Ք. ԵՐԵՎԱՆ

« 07 » « մայիսի » 2012թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ի 2011 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռում և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության արժանահավատությունը ճշտելու նպատակով Ընկերության Վերստուգողի կողմից իրականացվել է Ընկերության հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգում: Ստուգումը կազմակերպվել և իրականացվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքների, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերի, Ընկերության կանոնադրության և ՀՀ կառավարության 2005թվականի մայիսի 19-ի N 1187-Ն որոշման պահանջների համաձայն, Ընկերության 01.07.2010թ. կայացած բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաստատված «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ – ի Վերստուգողի գործունեության կանոնակարգի համապատասխան:

Ստուգումը սկսվել է 2012թ. ապրիլի 2-ին և ավարտվել մայիսի 3-ին:

Ստուգմամբ պարզվեց.

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ ստեղծվել է ՀՀ Կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 907 որոշման, ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության 16.01.2001թ. թիվ 9 հրամանի, ինչպես նաև Ընկերության ընդհանուր ժողովի որոշման համաձայն:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արժեթղթերի

շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով և իր կանոնադրությամբ:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝ պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, կիսաֆաբրիկատների արտադրություն և վաճառք, նոր տեխնոլոգիաների մշակում, մասնագետների ուսուցման, վերապատրաստման, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպում:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10 348 896 000 դրամ, որը կազմում է 10 348 896 հատ սովորական անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ: Բոլոր 10 348 896 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից, ընդ որում 8 279 117 սովորական անվանական բաժնետոմսեր (80 տոկոսը) համարվում են պետական սեփականություն (տնօրինվում են ՀՀ էկանոմիկայի նախարարության կողմից), իսկ 2 069 779 սովորական անվանական բաժնետոմսեր (20 տոկոսը) սեփականության իրավունքով պատկանում են մասնակի անհատույց սեփականաշնորհման մասնակիցներին:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, ընդհանուր ղեկավարումն իրականացնում է տնօրենների խորհուրդը, իսկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գլխավոր տնօրենը:

Ընկերության կառուցվածքում հաշվապահությունը գործում է որպես առանձին ստորաբաժանում:

2011 թվականին Ընկերությունը գույքի, պարտավորությունների և տնտեսական գործառնությունների հաշվառումը վարում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից 2000թ. դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանով հաստատված կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառմանը վերաբերող օրենքների և իրավական ակտերի համաձայն:

Հաշվապահական հաշվառման կազմակերպման համար պատասխանատու է Գլխավոր տնօրենը:

Ընկերությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է 1C-Ջեռնարկություն հաշվապահական ծրագրով: 2011 թվականի համար գործել է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հիմնական միջոցները հաշվառվում են ըստ օբյեկտների, որոնք ունեն իրենց գույքային համարները:

Հիմնական միջոցների արժեքը դրանց իրական արժեքից էականորեն չտարբերվելու, հաշվեկշռում ճիշտ արտացոլվելու նպատակով ղեկավարվելով ՀՀՀՀ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի պահանջներով հաշվետու ժամանակաշրջանում 08.12.2011թ. դրությամբ «Ամերիա Աուդիտ» ՓԲԸ կողմից իրականացվել է հիմնական միջոցների վերագնահատում: Հիմնական միջոցների վաճառքից (օտարումից) Ընկերության եկամուտը հաշվետու տարում կազմել է 5,0 հազ. դրամ: Վարձակալված հիմնական միջոցների և վարձակալությամբ տրված հիմնական միջոցների համար առկա են վարձակալության պայմանագրերը, և տարվում է ընթացիկ հաշվառում: Դեբիտորական պարտքերը գործառնական վարձակալության գծով 01.01.12թ. դրությամբ կազմել են 4616.2 հազ. դրամ: Բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները ժամանակին գրանցվում են հաշվապահական հաշվառման հաշիվներում:

Վերստուգողի կողմից ուսումնասիրվել է ղեկավար մարմինների որոշումների կատարման ընթացքը, ստուգվել են փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին: Դիտարկվել են կանխավճարային հաշվետվությունները, գործուղման վերաբերյալ հրամանները: Ընկերության կողմից չի վարվում կանխավճարային հաշվետվությունների գրանցամատյան, բացակայում են ներկայացուցչական ծախսերի նախահաշիվները, դրանց հաստատման մասին փաստաթուղթը:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների փաթեթը կազմված է հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 01.01.2011թ.-ի դրությամբ կազմել է 72445.0 հազ. դրամ, տարվա ընթացքում հաշվի դեբետային շրջանառությունը կազմել է 334.0 հազ. դրամ, իսկ կրեդիտային շրջանառությունը կազմել է 6763.0 հազ. դրամ: 01.01..2012թ.-ի դրությամբ շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեքը կազմել է 302701.0 հազ. դրամ, հաշվեկշռային արժեքը՝ 66016. հազ. դրամ:

Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 01.01.2011թ.-ի դրությամբ կազմել է 532399.0 հազ. դրամ, տարվա ընթացքում հաշվի դեբետային շրջանառությունը կազմել է 334.0 հազ. դրամ, իսկ կրեդիտային շրջանառությունը կազմել է 334.0 հազ. դրամ: 01.01.2012թ.-ի դրությամբ շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցների արժեքը կազմել է 1458138.0 հազ. դրամ, հաշվեկշռային արժեքը՝ 532399.0 հազ. դրամ:

Հողամասեր հաշվի մնացորդը ինչպես 01.01.2011թ.-ի դրությամբ, այնպես էլ 01.01.2012թ.-ի դրությամբ կազմել է 157738,0 հազ. դրամ: Այս հաշվի մեջ ներառված է նաև օրենքով սահմանված կարգով անհատույց ստացված հողամասի արժեքը:

Հաշվապահական հաշվեկշռի համաձայն 01.01.2012թ.-ի դրությամբ Ընկերության պաշարների մնացորդը կազմում է 860355.0 հազ. դրամ:

Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների, այլ ոչ ընթացիկ ակտիվների, արտադրանքի, դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների գույքագրման ժամանակ ավելցուկ կամ պակասորդ չի գրանցվել կամ հիմք են ընդունվել դրանց հաշվապահական հաշվառման տվյալները:

2011թ. համաձայն Ընկերության Գլխավոր տնօրենի մարտի 29-ի թիվ 16 հրամանի, հունիսի 24-ի թիվ 28 հրամանի, սեպտեմբերի 28-ի թիվ 45 հրամանի և դեկտեմբերի 12-ի թիվ 63 հրամանի՝ Ընկերության գույքագրման հանձնաժողովի կողմից իրականացված հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գույքագրումների արդյունքներն ինչպես և նախորդ տարիներում, այժմ էլ ներկայացվել են ռուսերեն բլանկների վրա, առկա են նյութական պատասխանատու անձանց հետ կնքված պայմանագրերը:

Գույքագրման արդյունքներով արձանագրվել է 34.9 գրամ արծաթի և 3.9 գրամ ոսկու պակասորդ, որը Կենտրոնական գույքագրման հանձնաժողովի (ԿԳՀ) առ 18.05.2011թ. (Արձանագրություն N ԿԳՀ – 2/11), առ 07.09.2011թ. (Արձանագրություն N ԿԳՀ – 3/11), առ 21.11.2011թ. (Արձանագրություն N ԿԳՀ – 4/11) և առ 24.01.2012թ. (Արձանագրություն N ԿԳՀ – 1/12) նիստերում քննարկումների արդյունքում որոշվել է ձևակերպել արտադրության հաշվին, որպես անվերադարձ կորուստ: Առ 01.01.2012թ. նախորդ տարիներին արձանագրված պակասորդների դիմաց որպես նյութական վնասի փոխհատուցում գումար չի վերականգնվել:

Ընկերության գույքագրման հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000թ. հունիսի 2-ի «Կազմակերպությունների

ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը» հաստատելու մասին թիվ 102 հրամանի պահանջները որոշակիորեն խախտվել են:

Ըստ Ընկերության հաշվապահական հաշվեկշռի՝ 01.01.2012թ. դրությամբ վաճառքների գծով դեբիտորական պարտքերը կազմել են 1798318.0 հազ.դրամ: Ընկերության կողմից տրված ընթացիկ կանխավճարներ հաշվի մնացորդը 01.01.2012թ կազմել է 13506,0 հազ.դրամ: Բյուջեի գծով կարճաժամկետ դեբիտորական պարտքեր հաշվի մնացորդը 01.01.2012թ կազմել է 32831.0 հազ.դրամ, իսկ այլ դեբիտորական պարտքեր հաշվի մնացորդը՝ 29927 հազ. դրամ :

Այսպիսով Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերի մնացորդը կազմել է 1874582.0 հազ. դրամ, որից 1791956.2 հազ. դրամ դեբիտորական պարտքը (95.6 տոկոս) վերաբերում է ԵՌԳ-1 «ԳԵՈՄՈՆ» ԲԲԸ-ին, 38931,5 հազ. դրամ դեբիտորական պարտքի (2 տոկոս) մնացորդն առաջացել է 2001-2003թթ. ընթացքում:

01.01.2012թ. դրությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը կազմում է 46994.0 հազ. դրամ:

2011թ.-ին Ընկերությունը գործարքներն իրականացրել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հետ:

Ընկերության գործարքները հիմնականում վճարվել և ստացվել են բանկային փոխանցմամբ, բացառությամբ առհաշիվ անձանց և ընկերության ֆիրմային խանութների միջոցով իրականացվող գործարքների:

Բանկային հաշիվներով դրամական միջոցների հաշվառման գործընթացը բավարարում է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին :

ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և ՀՀ պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N202-Ն որոշմամբ սահմանված կարգով հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների հաշվարկման հիմքերի վերաբերյալ «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ խորհրդի կողմից ներկայացված առաջարկության և Ֆինանսական հաշվետվությունների NN 1- 2 ձևերի հետ տվյալների համադրման արդյունքում շեղումներ չեն հայտնաբերվել:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50 հոդվածի 1-ին կետի ա) ենթակետի հիմքով շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման սահմանափակումը գործում է: 2011թ. «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական կապիտալից, հետևաբար ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 114 հոդվածի 3-րդ կետի հիմքով շահութաբաժիններ չեն հայտարարվել և վճարվել: Նախորդ տարիների գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջեի հանդեպ շահութաբաժինների պարտավորություն չի եղել:

Ընկերությունում հիմնադրամներ, ինչպես նաև անհուսալի դեբիտորական պարտքերի դուրս գրման համար պահուստ չի ստեղծվում:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 3-րդ կետի պահանջի համաձայն լիազոր մարմնին ներկայացված, Ընկերությունում կատարված ստուգման և գույքագրման արդյունքներից բխող, կանոնադրական կապիտալի նվազմանն ուղղված միջոցառումներն ընթացքի մեջ են:

01.01.2012 թվականի դրությամբ «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ ոչ ընթացիկ պարտավորությունները ակտիվներին վերաբերող շնորհումների հաշվի մնացորդում կազմել են 144051 հազ. դրամ ինչպես և 01.01.2011թ.-ի դրությամբ

01.01.2012թ. դրությամբ գնումների գծով կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 236931.0 հազ.դրամ: Հարկ է նշել, որ նախորդ տարիներին ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ մասով սխալ ձևակերպումների արդյունքում արձանագրված դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ավելացումների մասով 10.01.2012թ. փոխադարձ հաշվարկների ստուգման ակտով արձանագրվել է այն, որ 31.12.2011թ. դրությամբ «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ հաշվարկված տվյալներով պարտքը Երևանի Ոսկերչական Գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ին կազմում է 235 730 397.57 դրամ, իսկ Երևանի Ոսկերչական Գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի պարտքը «Երևանի Ոսկերչական Գործարան» ԲԲԸ-ին կազմում է 1 791 956 213.22 դրամ :

01.01.2012թ. դրությամբ շահութահարկի գծով Ընկերությունը 67438.7 հազ. դրամ գերավճար ունի:

01.01.2012թ. դրությամբ ԱԱՀ-ի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ 31291.1 հազ. դրամ գերավճար ունի:

01.01.2012թ. դրությամբ եկամտահարկի, գույքահարկի և հողի հարկի գծով Ընկերությունը պետբյուջեի նկատմամբ 1539.4 հազ. դրամ գերավճար ունի:

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 54675.0 հազ.դրամ, գործառնական այլ եկամուտները կազմել են 82220.0 հազ.դրամ:

Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը կազմել է 38466.0 հազ.դրամ, այլ գործառնական գործունեությունից ծախսեր՝ 117973.0 հազ.դրամ:

2011թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում հաշվետու տարվա վնասը կազմել է 152360.0 հազ. դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 215028.0 հազ. դրամ վնասի դիմաց՝ հետևյալ կառուցվածքային փոփոխությունների հետևանքով.

- . իրացման ծավալները արժեքային արտահայտությամբ նվազել են մոտ 5,7%,
- . գործառնական այլ եկամուտները աճել են՝ 812%,
- . իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը նվազել է մոտ 21% ,
- . իրացման ծախսերը նվազել են մոտ 28% ,
- . վարչական ծախսերը նվազել է մոտ 3% ,
- . գործառնական այլ ծախսերը աճել են մոտ 510%,
- . նախորդ տարիների ծախսերը նվազել են մոտ 88% ,
- . այլ ոչ գործառնական վնասը նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշի նկատմամբ նվազել է մոտ 87% :

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ Կանոնադրության համաձայն Ընկերության տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանն է պատկանում Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի հաստատումը: 2011թվականի համար տնօրենների խորհրդի նիստով Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշիվ չի հաստատվել:

2012թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմման համար առաջարկվել է կազմել ֆինանսատնտեսական գործունեության առողջացման ավելի իրատեսական ծրագիր՝ ելնելով ընկերության կանոնադրական խնդիրների իրագործման տեսանկյունից, որի վերջնական նպատակը պետք է լինի իրացման այն սահմանային ծավալի ապահովումը, որը ձեռնարկությանը կբերի շահութաբերության շեմի հաղթահարման թեկուզև չնչին դրական տեղաշարժ: Դա թույլ կտա խուսափել վերոհիշյալ ծախսային հոդվածների (հիմնականում հաստատուն ծախսերի մասով)

փաստացի ցուցանիշերը կանխատեսվողից գերազանցելու փաստերից, առավել ևս, երբ ընկերության գործունեության ոլորտը մեծապես կախված է հունքի գնի համաշխարհային անկանխատեսելի վարքագծից:

Ընկերության հաշվեկշռի կառուցվածքի վերլուծություն:

Ընդհանուր առմամբ հաշվեկշիռը համարվում է անբավարար, իսկ կազմակերպությունն էլ անվճարունակ, երբ`

ա. Ընթացիկ իրացվելիության գործակիցը տվյալ ժամանակաշրջանի վերջում փոքր է 2 - ից: Այն ցույց է տալիս Ընկերության կարճաժամկետ պարտավորությունների` ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը:

$$Q1 = \frac{\text{Ընդամենը ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընդամենը ընթացիկ պարտավորություններ}} = \frac{2793032}{243889} = 11.45$$

բ. Սեփական միջոցներով ապահովվածության գործակիցը (սեփական ընթացիկ ակտիվների և ընթացիկ ակտիվների հարաբերակցություն) փոքր է 0,1-ից:

$$Q2 = \frac{\text{Սեփ. կապիտալ+ոչ ընթ. պարտ-մներ - ոչ ընթ. ակտիվներ}}{\text{Ընթացիկ ակտիվներ}} = \frac{2549143}{2793032} = 0,91$$

Ավարտելով Ընկերության 2011թվականի տարեկան հաշվետվություններում և ֆինանսական փաստաթղթերում բովանդակվող տեղեկությունների հավաստիության ստուգման աշխատանքները` պետք է նշել, որ ներկայումս ընթանում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ՀՀ կառավարության 11 մարտի 2010 թվականի «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» № 235-Ն որոշմամբ հրապարակված պաշտոնական հայերեն տարբերակով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ»)

համապատասխանեցման փոխարկման գործընթացը: Նշված գործընթացի շրջանակում, սկսած 12.04.2012թ.-ից, «ԱՆԻԿՈՍ» ՍՊԸ-ի կողմից, գնահատման միջազգային նորմերին համապատասխան՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՍՏ 1.0-2006 «Ստանդարտացման ազգային համակարգ. Հիմնական դրույթներ» ստանդարտին, իրականացվում է «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ» ԲԲԸ-ին պատկանող, ներկայացված ցանկում ներառված (հաշվապահական հաշվեկշռում հաշվառված) հիմնական միջոցների շուկայական արժեքի որոշում հաշվապահական հաշվեկշռում դրանց ներառման նպատակով: Նախկին համընդհանուր ընդունված հաշվապահական սկզբունքներից ՖՀՄՍ-ներին անցման ազդեցությունը Ընկերության ֆինանսական վիճակի, համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալի, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի վրա կարտացոլվի վերոնշյալ փոխարկման գործընթացի ավարտից հետո:

Այսպիսով՝

ա/ առկա են թերացումներ Ընկերության գործունեության վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներով և նախորդ ստուգումներով առաջադրանքների կատարման գործընթացում,

բ/ ակտիվների և պարտավորությունների գույքագրումները /եռամսյակային և տարեկան / կատարվում են գործող կարգի պահանջների խախտումներով:

գ/ ամենամյա ծախսերի նախահաշվի կազմման և հաստատման վերաբերյալ տնօրենների խորհրդի կողմից Ընկերության Կանոնադրության վերոնշյալ պահանջի խախտման առկայությունը:

դ/ Ընկերության կողմից օգտագործվող համակարգչային ծրագրի թերությունների պատճառով հաշվապահական հաշվառման հաշիվներում առանձին դեպքերում ճիշտ չեն հաշվառվում հաշիվների շրջանառությունները, մնացորդները,

ե/ անհրաժեշտ է Ընկերության ակտիվների և պարտավորությունների վերջնական մեծությունը ճշտելուց հետո «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով հայտարարել և գրանցել Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում:

Բացառությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա նախորդ մասերում հիշատակված հարցերի ազդեցությունից, ֆինանսական հաշվետվությունները առ 1-ը

հունվարի 2012թ.-ի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների ու դրամական հոսքերի մասին տալիս են իրական պատկերը (կամ բոլոր էական առումներով ճիշտ են ներկայացված)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

Գտնում են, որ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար պետք է ուժեղացվի Ընկերության ֆինանսական կառավարումը, մշակվի մարքեթինգի քաղաքականության հայեցակարգ, վարվի գնային ճկուն քաղաքականություն, իրականացվի ոսկու կորստի ապահովագրման քաղաքականություն, միջոցներ ձեռնարկվի հաստատուն ծախսերը կրճատելու ուղղությամբ:

Վերստուգող

Ղ. Հակոբյան

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 1

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
Բաժնետերերի ընդհանուր տարեկան 29.06.12թ. Ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 14 բաժնետերեր կամ նրանց լիազոր
ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից
/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8 315 408 բաժնետոմսի սեփականատեր,
կամ ժողովին ներկա էին 80,35% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն
ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Ղազարյան

Ա. Ժամհարյան

Ա.Ներսիսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության
բաժնետերերի ընդհանուր տարեկան 29.06.2012թ. ժողովի կողմից
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները.՝ (առկա 8 315 408 ձայների քանակից)

1. Ընկերության 2011թ. գործնության տարեկան հաշվետվության հաստատումը.՝

կողմ - 8 315 408 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության 2011թ. տարեկան գործնությունը հաստատվեց:

2. Ընկերության 2011թվականի ֆինանսատնտեսական գործնությունը ամփոփոխ տարեկան հաշվետվության հաստատումը.՝

կողմ - 8 315 408 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության 2011թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործնությունը հաստատվեց:

3. Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվության հաստատումը.՝

կողմ - 8 315 408 դեմ - 0 ձեռնպահ - 0

Ընկերության շահույթի և վնասի հաշվետվությունը հաստատվեց:

4. Ընկերության Վերստուգողի 2011 թվականի հաշվետվության հաստատումը՝

կողմ - 8 315 408 դեմ - 0 ձեռնպահ - 0

5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրության ընտրության արդյունքում, որը կատարվել է գումարային (կոմուլյատիվ) ձևով բաժնետերերը իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.՝

1. Արա Պետրոսյան	կողմ`	8 315 408
2. Էմիլ Գրիգորյան	կողմ`	8 315 408
3. Գագիկ Աղաջանյան	կողմ`	8 315 408
4. Սեյրան Սուվարյան	կողմ`	8 315 408
5 . Էդուարդ Մաթևոսյան	կողմ`	8 315 408

Ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետևյալ թեկնածուները ընտրվել են.

1. Արա Պետրոսյան
2. Էմիլ Գրիգորյան
3. Գագիկ Աղաջանյան
4. Սեյրան Սուվարյան
- 5 Էդուարդ Մաթևոսյան

6. Ընկերության ակտիվների, այդ թվում հիմնական միջոցների վերագնահատման աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին հաշվետվության ներկայացում:

կողմ - 8 315 408

դեմ - 0

ձեռնպահ - 0

Հանձնաժողովի անդամներ`

Գ. Ղազարյան

Ա. Ժամհարյան

Ա.Ներսիսյան

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

« Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերության

Բաժնետերերի ընդհանուր տարեկան 29.06.12թ. ժողովի կողմից

ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

ժողովին մասնակցում էին 14 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից

/ 10 348 896 հատ / հանդիսանում են 8 315 408 բաժնետոմսի սեփականատեր, կամ ժողովին ներկա էին 80,35% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ օրակարգի առաջին 5 հարցերը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

1. կետ – կողմ 8 315 408 ձայն
2. կետ – կողմ 8 315 408 ձայն
3. կետ – կողմ 8 315 408 ձայն
4. կետ – կողմ 8 315 408 ձայն
5. կետ – Քանի որ տնօրենների խորհրդի անդամները ընտրվում են գումարային /կումուլյատիվ/ ձևով, բաժնետերերն իրենց ձայները բաշխել են հետևյալ կերպ.՝

Տնօրենների խորհրդի անդամներ՝

1. Արա Պետրոսյան	կողմ՝	8 315 408
2. Էմիլ Գրիգորյան	կողմ՝	8 315 408
3. Գագիկ Աղաջանյան	կողմ՝	8 315 408
4. Սեյրան Սուվարյան.....	կողմ՝	8 315 408
5 Էդուարդ Մաթևոսյան	կողմ՝	8 315 408

Հանձնաժողովի անդամներ՝

Գ. Ղազարյան

Ա. Ժամհարյան

Ա.Ներսիսյան

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
«Երևանի ոսկերչական գործարան»
բաց բաժնետիրական ընկերության
տնօրենների խորհրդի կողմից
արձանագրության համարը 2Խ-12
20.05.12թ.

**«Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

29 հունիսի 2012 թվական

1. Ընկերության 2011թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեությունն ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
3. Ընկերության 2011թ. շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
4. Ընկերության Վերստուգողի 2011թ հաշվետվության հաստատում:
5. Ընկերության տնօրենների խորհրդի անդամների ընտրություն:

« Երևանի ոսկերչական գործարան » Բ Բ Ը

N	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Մասնագիտ.	Պաշտոնը	Սով.բաժնետոմս «ԵՈԳ» ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամների թեկնածուներ						
1.	Արա Պետրոսյան	1960	ՀՀ	ճարտարագետ	ՀՀ էկանոմիկայի նախարարի տեղակալ	Չունի
2.	Էմիլ Գրիգորյան	1938	ՀՀ	ճարտարագետ	ԵՈԳ-1 «ԳՆՈՄՈՆ»ԲԲԸ Գլխավոր տնօրեն	5894
3.	Էդուարդ Մաթևոսյան	1945	ՀՀ	իրավաբան	«ԵՈԳ»ԲԲԸ, Իրավաբան	7764
4.	Գագիկ Աղաջանյան	1971	ՀՀ	տնտեսագետ	ԲՏԱ բանկ, ռիսկերի ծառայության պետ	Չունի
5.	Սեյրան Սուվարյան	1960	ՀՀ	տնտեսագետ	Երեվանի պետական համալսարան, դոցենտ	Չունի

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Երևանի ոսկերչական գործարան» Բաց Բաժնետիրական Ընկերություն.

----- 28 հունիսի 2011թ
բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2011թ. տարեկան հաշվետվության հաստատում:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 2. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2011 թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 3. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ 2011 թ. շահույթի և վնասի հաշվետվության հաստատում:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 4. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ Վերահսկողի 2011թվականի հաշվետվության հաստատումը:
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 5. «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ տնօրենների խորհրդի անդամների ընտրություն

հետևյալ կազմով.
ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ

ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՉԱՅՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ x 5 =

Արա Պետրոսյան	ձայն
Էմիլ Գրիգորյան	ձայն
Էդուարդ Մաթևոսյան	ձայն
Գագիկ Աղաջանյան	ձայն
Սեյրան Սուվարյան	ձայն

..... ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. հունիսի 29 -ին, ժամը 16⁰⁰ «ԵՈԳ» ԲԲԸ (Արշակունյաց 12) տեղի կունենա «Երևանի ոսկերչական գործարան» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

- ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**
1. Ընկերության 2011թ. գործնության տարեկան հաշվետվության հաստատում:
 2. Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեությունը ամփոփող տարեկան հաշվետվության հաստատում:
 3. Ընկերության շահույթի և վնասի հաշվի հաստատում:
 4. Ընկերության Վերստուգողի 2011թ.ի հաշվետվության հաստատում:
 5. Տնօրենների խորհուրդի անդամների ընտրություն:

Այլ տեղեկությունների համար դիմել «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ, հեռ. 52-53-21:

Խորհուրդ

Ընկերության տնօրենների